

25. 866

Հրատ. Թիֆ. Հ. Գիլատնանսական Ընկ.

ՀԱՅ

ԿՈՂԵՐԱՏՈՐՆԵՐԻՆ

ԱՐՑ. ՎԱՆՅԱՆ

Բ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «ՄԱՄՈՒՆ» Լորիս-Մելիքեան փ. № 22

1917

8 AUG 2013

05 JAN 2013

29 148

Հրատ. Թիֆ. Հ. Գիլառնեսական Հնկ.

300

623-44



ՀԱՅ

ԿՈՇՊԵՐԱՏՈՐՆԵՐԻՆ



15684-52

ԹԻՖԼԻՍ

Տպարան ՄԱՄՈՒԼ, Լորիս-Մելիքեան փ. № 22  
1917

25.866

## ՀԱՅ ԿՈՈՊԵՐԱՏՈՐՆԵՐԻՆ

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կօօպերատիւ շարժումը ունի իր պատմութիւնը: Կօօպերացիան ոչ միայն գործնական, այլ և անտեսական ինսպիր է:

Կօօպերատիւ ուսմունքը իբրև տարիձանաբար կազմակերպւող գիտութիւն՝ անհրաժեշտութիւն է դառնում հասարակական բոլոր խաւերի համար. նա քաղաքակիրթ աշխարհներում նոյն իսկ իր պատշաճաւոր ամբիոնն է գրաւում համալսարաններում և այլ կարգի մասնագիտական բարձրագոյն դպրոցներում:

Ուսաստանում ևս ներկայումս արդէն կօօպերատիւ շարժումը այնպիսի հոկայական չափ ընթառ է հասնում, որ ընդգրկում է ժողովրդական տնտեսութեան տարբեր ասպարէզները և կեանքի ամենաուժեղ գործօններից մէկն է դառնում: Կարիքն այնքան շօշափելի է, հերթական, որ ոռուս բարձրագոյն դպրոցներն ևս իրենց հերթին անտարբեր չէին կարող լինել

ծաւալող շարժմանը և հարկաւոր լրջութեամբ չվերաբերւել։ Դեռ հին, վատթար ոէժիմի ժամանակ հալածւած, աւտոնոմիայից զուրկ, խեղճ ու կրակ բարձրագոյն կրթարանները այսուամենայնիւ չէին կարող կօպերատիւ պատմութեան և ուսմունքի դասաւանդման անհրաժեշտութեան առաջ իրենց դռները չբանալ և յատուկ ամբիօններ չյատկացնել այդ նպատակով։

Այսպէս՝ օրինակ, կիսկի և Մոսկւայի առևտրական ճեմարաններում և մանաւորապէս Շանեաւսկու համալսարանում կօպերացիան արդէն մի քանի տարի է, ինչ աւանդում է բաւական հիմնաւոր և բազմակողմանի կերպով։ Կօպերատոր մանագէտների թիւը այս իսկ պատճառով աստիճանաբար աւելանում է, կօպերատորների շարքերը խտանում։

Ծակայն երկրի ընդարձակ կարիքի, կօպերատիւ շարժման զանազանակերպ ծաւալման հանդէպ մասնագէտ կօպերատորների քանակը շատ աննշան է։ Մեր գժրախտ երկրի պայմաները մինչև այս մեծ պատմական յեղաշրջումը՝ այնպէս են դասաւորւած եղել, որ մենք մասնագէտներ չենք ունեցել ինչպէս բոլոր ասպարէզներում, այնպէս և կօպերատիւ կազմակերպման խնդրում։ Պէտք է կօպերատիւներ կազմակերպել, անհրաժեշտ է եղած կօպերատիւ-

ները կանոնաւորել, հաշւապահութիւնը բաւարար հիմքերի վրայ գնել, եղած կօպերատիւներից ուայօնական, նահանգական և աւելի մեծ տնտեսական տերբիառիաներ ընդգրկող միութիւններ առաջ բերել, կօպերատիւ ոգին, իդէան մասսաների սեփականութիւն դարձնել և այլն։

Այս բոլորը կարելի է անել, եթէ միայն գտնւեն պատրաստւած հրահանգիչներ։ Միայն մի քանի ուսւական խոշոր կօպերատիւ միութիւններին յաջողւել է հրահանգիչ-կօպերատորների աշխատանքների մէջ որոշ սիստեմ մտցնել, վարկային, սպառողական, գիւղատնտեսական կօպերատիւնների, արտելների կազմակերպման, կանոնաւորման խնդրում իւրաքանչիւր կարգի կօպերատիւնների համար յատուկ մասնագէտ կօպերատորներ ունենալ, սպառողական ընկերութիւնների կազմակերպչական գործը առանձին հրահանգիչների, իսկ հաշւապահական մասը տարբեր մասնագէտների ձեռքով տանել։

Կօպերատոր գործիչների կարիքը, մասնաւորապէս կովկասում և յատկապէս հայ իրականութեան մէջ, չափազանց զգալի է։ Անչափ յետ ենք մնացել մենք ուսւական կօպերացիայից, յետ ենք և մեր հարևան վրացի ժողովրդից։ Բայց և այնպէս, զոնէ այսուհետև զգանք կեանքի պահանջը, գոնէ այսուհետև մի քիչ գործնական

լինինք և հայ աշխատաւորութեանը բացի դատարկ խօսքերից, կերակրենք նոյնպէս կենդանի գործով։

Հայ մտաւորականութեան զբաղմունքի ամենաէտան առարկաներից մէկը պիտի լինի կօօպերացիան, հարկաւոր է, որ հայ կօօպերատորներ ևս կեանքի մէջ մտնեն և տանջւած զիւղացիութեան նոր ողի, նոր գաղափարներ ներշնչեն։

Հայ կօօպերատորը որպէս զի մեր միջավայրում օգտակար լինի, նա անպայման պատրաստութիւն պիտի ունենայ. նա պիտի ոչ միայն կօօպերատոր լինի նեղ իմաստով, այլ եւ հասարակական պատրաստութիւն պիտի ունենայ, որովհետեւ հայ զիւղը անչափ խաւար է, և կօօպերատոր հրահանգիչը, որ մտնում է զիւղ, հայ շինականի հետ ապրելու, անպայման միակ բանիմաց ոյժն է լինելու իր մռայլ շրջապատում, զիւղացիութեան միակ խորհրդատուն, օժանդակողը բոլոր գործերում և ձեռնարկներում։

Հայ կօօպերատոր հրահանգիչը պէտք է զիւղացու հոգեբանութեանը տեղեակ լինի, հայ զիւղում քիչ ու շատ ապրած եւ զիւղի բոլոր ինքնայտուկ կողմերին ծանօթ։ Հայ կօօպերատորի համար կարեւոր է հայերէն լեզու կանոնաւոր տիրապետութիւնը, որովհետեւ մասնաւորապէս

մեզանում յաճախ միկնոյն գաւառի տարբեր մասերում, լեռնային և դաշտային գիւղերում, անգամ արևան գիւղերում նկատում է տարբերութիւն, և բնականօրէն հայերէն լեզվին չտիրապետող կօօպերատորը երբէք չի կարող անցեալի ծանր, խեղգող ոչժիմից սարսափած զիւղացիութեան հոգու նըրութիւնները, ապրումները և վերաբերմունքը հասկանալ, ամեն բանից խուտափող, երկչոտ, կասկածամիտ զիւղացու անկեղծ բարեկամը լինել։

Հայ կօօպերատորը սկսելով իր գործունէութիւնը հայկական միջավայրում, բնականօրէն հարց է առաջնում թէ՝ ներկայ անտեսական պայմաններում որ կարգի կօօպերատիւների վրայ ամենից աւելի ուշագրութիւն պէտի դարձնի. Մեր զիւղի դրութիւնը այնքան ճգնաժամային է, որ նըմն կարենոր են թէ սպառողական, թէ զիւղանտեսական և թէ վերջապէս վարկային կօօպերատիւներ. Սակայն ներկայումս շնորհիւ մանը վարկի վերատեսուչների, մեր զիւղերում Գանձակի և Երևանի նահանգներում, վարկային կօօպերատիւներ բաւականին դործում են: Վարկային կօօպերացիան իր բիւրոկրատիական ոչժիմի հետ բեր սծ թերութիւնների հետ, որոշ դեր է կատարել մեր զիւղում, կոիւ մղելով վաշխառութեան դէմ: Առաջիկայում, քաղաքա-

կան կեանքի հիմնական յեղաշրջան հետ վարկային կօօպերացիայի հրահանգիչ վերատեսուշերը արդէն կարող կը լինին ազատ գործել և հեռու լինել որևէ խնամակալութիւնից, դնելով գործը զուտ գեմոկրատական հիմքերի վրայ։ Այսպէս թէ այնպէս, վարկային կօօպերացիան հրահանգիչների տեսակէտից մասամբ աալահովւած է։

Ի՞նչ վերաբերում է գիւղատնտեսական կօօպերատիւներին, պիտի ասենք, որ ներկայումս համեմատելով միւս կարգի կօօպերատիւների և յատկապէս սպառողական կօօպերատիւների հետ՝ կարիքը այնչափ հերթական չէ։ Պէտք է, որ այս կարգի կօօպերատիւների մասին հոգտանեն մեր մասնագիտ գիւղատնտեսները։

Ներկայումս ամենամեծ և կենսական կարիքը, որ այնպէս զգացւում է գիւղում, այդ սպառողական ըն ըութիւնների խնդիրն է։ Երեսնի նահանգու ապառզական ընկերութիւնների թիւը հազիւ օ է, Գանձակի նահանգում 30, Կարսի շրջանում մօտ 15. մի թիւ, որ իսկապէս շատ աննշան է, եթէ ի նկատի ունենանք շրջանների մեծութիւնը և սպառողների պէտքերը։ Պարզ է, որ իւրաքանչիւր քիչ ու շատ մեծ գիւղ կարող է ունենալ մի սպառզական խանութ, կարող է իր հետ տնտեսապէս կապել հարեան գիւղերը։ Զմոռանանք, որ մեր հարեան

վրացիները միայն Քութայիսի նահանգում ունին 20-ի չափ սպառողական ընկերութիւններ։ Այս իսկ պատճառով նրանք զեռ ոէակցիայի մուայլ օրերում, քաղաքական յեղաշրջումից առաջ, հնարաւորութիւն ունէին պարենաւորման գործում ամենաառաջնակարգ գերը կատարել և նահանգի ազգաբնակչութեան պէտքերին կազմակերպւած եղանակներով ընդ առաջ գնալ։ Մինչդեռ մեղանում այս համեմատաբար միխթարական վիճակի հանդէս՝ մինչև քաղաքական յեղաշրջումը՝ պարենաւորման գործը չափազանց անյուսայի պայմանների մէջ էր։ Նահանգապետութիւնը ասչափ կասկածով էր վերաբերւում եղած կօօպերատիւններին։ Արհեստական խնամակալութեամբ պաշտպանում էր միայն գործող միքանի չինովսիկական կօօպերատիւնները, որոնք իսկապէս կօօպերատիւններ չեն, այլ զուտ բիւրկրատական հաստատութիւններ։ Գիւղական կօօպերատիւնները չէին կարող օգտւել բիւրոկրատիայի խնամքից, նրանք ժողովրդական, յեղափոխական մտքերի օճախներ էին համարւում։ Ահա, թէ ինչու, օրինակ, երևանի նահանգում ստացւելիք տմսական 100 վագոն մթերքների բաշխումը կարող էր կատարւել միայն չինովսիկների, գաւառապետների, պրիստամների և գիւղական տանուտէլիների միջոցով։ Իսկ թէ այդ պորտա-

բոյծ տարբերը ինչպէս էին բաշխում, այդ արդէն աննկարազգելի էր: Գիւղացիութիւնը երբէք շաքարի, ալիւրի, նաֆթի երես չէր տեսնում: Շարուը-Դարալագեազի, չին նախիջևանի գաւառների հայ շինականը հիւանդներին անգամ հնարաւորութիւն չունէր մի բաժակ թէյով մխիթարելու: Այս ու այն անկիւնում, գաղտնի կերպով, ծախւող շաքարը 3-4 ոսւբլուց, ալիւրը 8-10 ոսւբլուց պակաս գին չունէր: Անպատասխանաւութիւնն ու յանդգնութիւնը այն աստիճանի էր հասնում, որ օրինակ, նախիջևանի գաւառապետ Մամուլացիլին, ստացւած շաքարը փոխանակ գիւղացիութեան վաճառելու, առանց քաշւելու, իր գործակալ վաճառականների միջոցով ո զարկում էր Պարսկաստան, բարձր գներով վաճառում, իսկ նահանգական վարչութեանն էլ հաղորդում, թէ շաքարը միանգամայն արդար հիմքերի վրայ բաշխել է գիւղացիութեանը: Նոյնն էին անգամ շրջանային պրիստաւները, տանուտէրները, որոնց ձեռքը, եթէ պատահում էր որ շաքար, կամ ալիւր էր ընկնում, անմիջապէս վաճառում էին խնամիներին:

Իսկ գիւղացիութիւնը միշտ նոյն դժբախտը, միշտ նոյն զրկւածն էր:

Այս իսկ պատճառով մինչև մեծ քաղաքական յեղաշրջումը, չէր էլ կարելի խօսել գաւառի

պարենաւորման մասին: Եթէ էլի մի կերպ գիւղացիութիւնը երբեմն ձեռք էր բերում ալիւր, շաքար կամ նաֆթ, այդ էլ գարձեալ շնորհիւ վարկային, կամ սպառողական կօօպերատիւների: Վարչական մարմինների անտարբեր և նոյն իսկ թշնամական վերաբերմունքը այսուամենայնիւ չէր կարող թուլացնել կօօպերատիւների ողին, մոռացնել տալ աշխատաւորութեան շահերը գիւղացիական կօօպերատիւների մէջ:

Հայ կօօպերատորը, որ գնում է հայ չարատանջ գաւառը, առանձնապէս ուշադրութիւն է գարձնելու սպառողական կօօպերատիւներին, որոնք հիմնւելով համագործական սկզբունքի վրայ, նպատակ ունին անդամ-ընկերների ընդհանուր ջանքերով աւելի լաւ բաւարարել կեանքի կատիքները եւ չեղոքացնել զանազան միջնորդներին, առեւտրականներին եւ աշխատաւորութեան հաշին ապրողներին:

Հայ կօօպերատոր համանգիչը սկսելով իր աշխատանքները, պէտք է մի շաբք հանգստամնը-ներ ի նկատի ունենայ իբրև ուղեցոյց, և իւրաշիւր քայլափոխում համաձայն այդ ուղեցոյցի ծրագրին զեկավարի: Շատուրի համար այնպէս է թւում, թէ կօօպերատիւ խնդիրներում առանձին հմտութիւն չի պահանջւում, մինչդեռ այդ տեսակէտը հիմնաւորապէս սխալ է. ընդհակա-

ուակը, կօօպերացիան անչափ նուրբ, լուրջ և  
փորձառու վերաբերմունք է պահանջում, որ  
առանց ծրագրի, պատահական աշխատանքների  
դէպքում կարող է միայն կորստարել հետևանք-  
ներ ունենալ: Այս տեսակէտից հայ կօօպերա-  
տորը պիտի անպայման ունենայ որոշ հիմնական  
դեկավար սկզբունքներ:

## ||

### ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԹՅՆԵՐ

#### Կօօպերատիւ ցանց

Կօօպերատոր հրահանգչի պարտակա-  
նութիւնները այնքան շատ են, այնքան բազմա-  
զան և նոյն իսկ վիճելի, որ ստորև մի առ մի  
թւելը ահագին աշխատանք է պահանջում: Գոնէ  
կանդ առնենք այն հիմնական խնդիրների գործ-  
նական հարցերի վրայ, առանց որոնց հայ կօօպե-  
րատորը օգտակար չի կարող լինել:

Հայ կօօպերատորը ուշադրութիւն պիտի  
դարձնի կօօպերատիւ կանոնաւոր ցանցի վրայ:  
Ամեն գիւղում երբէք պէտք չկայ սպառողական  
կօօպերատիւներ և ներու: Նախ քա՞ն այս կամ  
այն գիւղում կօօ ստիւ բանալը, ցանկալի է  
իւրաքանչիւր տնտ ական շրջանի համար կազ-  
մել յատուկ ցանցի ծրագիր, որը ելակէտ ունե-  
նալով, ձեռնարկել կօօպերատիւ միութիւնների

հիմնագրութեան: Այսպիսի ցանցի ծրագիր եթէ  
գոյութիւն չունի, ապա կարելի է կազմել մաս-  
նակցութեամբ իւրաքանչիւր շրջանի տեղական  
ոյժերի, հայ գիւղատնտեսների, եղած սպա-  
ռողական ընկերութիւնները վարչութեան ան-  
դամների, մասն վարկի վերատեսուչների և ընդ-  
համրապէս տեղական ոյժերի: Ցանցը կազմելիս  
կարիք չկայ շատ ու գաճաճ կօօպերատիւններ  
ունենալ, այլ անհամեմատ գերադասելի է, մա-  
սնաւանդ սկզբնական շրջանում, կօօպերատիւններ  
բանալ միայն կենտրոնական վայրերում և նրանց  
հետ կապել մի քանի վերստ հեռաւորութեան  
վրայ գտնւած գիւղերը, որոնք տնտեսապէս ձգտում  
են դէպի այդ գիւղը: Այս դէպքում պէտք է զե-  
կավարւել նախ անմիջական հնարաւորութեամբ  
և հետևութեամբ: Աւելի է հեշտ է առաջին հեր-  
թին կօօպերատիւ խանութներ հիմնել այն գիւ-  
ղերում, որտեղ արդէն գոյութիւն ունին վար-  
կային ընկերութիւններ և գիւղացիք որոշ գա-  
ղափար ունին կօօպերացիայի համագործակցու-  
թեան և նրա օգուտների մասին:

Այդպիսի գիւղում հայ կօօպերատորը ար-  
դէն հող ունի և նրա համար առանձին դժւա-  
րութիւններ չկան: Սակայն այս հանգամանքը  
ցանցի նկատմամբ պիտի լինի օժանդակ սիջոց,  
հիմնականը տեղական պայմաններն են: Կենտ-

բօնական գիւղը հանդիսանալու է տնտեսական՝  
ագրոնոմիական և թէ նոյն իսկ վարչական  
կենտրոն, որ իրոք իր հետ կապած լինի հարհան  
գիւղերը: Բացի ու յա՝ կորեոր է, որ կենտրոնա-  
կան գիւղը ունե նայ յարմար ճանապարհներ,  
որպէս զի հաղորդակցութիւնը կանոնաւոր լինի  
և ապրանքները տեղափոխելու խոշընդունել առաջ  
չգան: Խոշոր կօօպերատիւները գաճաճ կօօպե-  
րատիւներից այն առաւելութիւնն ունին, որ  
աւելի կողմակերպւած կըլինին և հնարաւորու-  
թիւն կունենան իրենց գոյութիւնը հեշտութեամբ  
պահպանել և ազատ լինել ամեն կարգի մրցումից:  
Իսկ մրցումը, եթէ այսօր նկատելի չէ, վաղը  
կարող է մեծ չափերի համեն և վայր ի վերոյ  
առաջ եկած կօօպերատիւների կեա՞քը կարճել:  
Միայն կենարոնական կօօպերատիւները տնտե-  
սապէս ամրապնդելուց յետոյ, հեշտութեամբ,  
արդէն ժամանակի ընթացքում, հնարաւորութիւնն  
կունենան իրենց բաժանմունքները բանալ մօտիկ  
գիւղում: Մեր գիւղերում յանցը կազմելիս,  
առաջին հերթի աշխատանքների ժամանակ պէտք  
է դաշտային և լեռնային ջրջանները իրարից բա-  
ժանել. դաշտում կարելի է աւելի մեծ տարա-  
ծութիւններ՝ 4—6 վերստ վերցնել իւրաքանչիւր  
կօօպերատիւի համար. իսկ լեռնային գիւղերի հա-  
մար 1—3 վերստ, որովհետեւ հաղորդակցութեան

պայման երը անչափ վատ են: Հայ գիւղացին  
ճանապարհներ չի սիրում, իսկ սարի գիւղե-  
րում նա առանձնապէս կտրւած է, իր խխունջի  
մէջ մտած:

Դասակարգային տեսակէտը եւ աշխատատ-  
րական կօօպերատիւը:

Հայ կօօպերատորը, որքան կարելի է, մատ-  
չելի պիտի լինի հայ գիւղացիութեանը, աշխա-  
տելու է մեր շահագործւած տարրերի, գիւղացի-  
ութեան և բանւորութեան համար: Զի կարելի  
երբէք կօօպերաց' այի գոները բանալ շահագոր-  
ծող, տիրապետող դասերի առաջ: Հայ կօօպե-  
րատորը զեկավար, ելու է աշխատաւորական սկըզ-  
բունքով: Ճիշտ է, կօօպերացիան խիստ գասա-  
կարգային բնոյթ չպիտի ունենայ, ինչպէս սան-  
ւորական միութիւն ներն են՝ արհեստակցական  
կաղմակերպութիւնները, սակայն այդ արգելք  
չի հանդիսանալու, որ կօօպերացիան աշխատա-  
ւորական կառուցւածք ունենայ: Ապագասակար-  
գային սպառողական կօօպերատիւնելը աւելի  
շուտ սովորական խանութներ են, երբեմն էլ  
նոյն իսկ իրենց բնոյթով ակցիոներական ընկե-  
րութիւններ, քան իսկապէս կօօպերատիւներ:  
Մրցումը այսպիսի կօօպերատիւներին աւելի շատ  
է հարւածում, որովհետեւ չկայ որ և է գաղա-  
փարական օղակ, որ կապի բոլոր անդամներին

և փորձութեան ժամին գօտեալնդի նրանց: Մինչ-  
դեռ այդպէս չեն բանւորական, գիւղացիական  
կօօպերատիւները, որոնք ներկայանում են  
տնտեսական որոշ խաւերի արտայայտիչը և ու-  
նին համանման շահերի խոր գիտակցութիւնը:  
Այստեղ տնտեսական միակերպ շահերը ստեղ-  
ծում են նոյնպէս որոշ գաղափարական բնոյթ  
ունեցող կարիք եր, որ այսպէս ներդաշնակօրէն  
կապում են կօօպերատիւի բոլոր անդամներին:  
Յամենայն դէպս չպէտք է մոռանալ մի բան, որ  
տիրող դասերը պէտք չունին կօօպերատիւների  
և եթէ նրանք փորձում են մտնել կօօպերատիւ-  
ների մէջ, ապա մեծ մասամբ մի նպատակով  
մեղնել սպառողական ընկերութիւնը, փակել  
նրա գոները որ կարելի լինի անլուր շահատա-  
կութիւնները շարունակել, սպառողների կազմա-  
կերպած պայքարը խափանել:

Մանաւանդ հայ գիւղերը՝ նոր Բայազիտի,  
Զանգեզուրի, Շարուր Դարալազեազի գաւառնե-  
րում, Աբարանում այնքան խաւար են յետամնաց,  
որ հեշտութեամբ հայ կուլակներն ու ցեցերը  
կօօպերացիան կարող են շահագործման նոր աղ-  
բիւր դարձնել և տիրապետել գիւղացիութեանը:  
Հայ գիւղի տղրուկների դէմ կուելլ շատ լուրջ,  
դժւարին խնդիր է, և հայ կօօպերատորը այս-  
տեղ է որ իր կազմակերպչական շնորհը հրա-

պարակ պիտի հանի, ճենու պահելով լուսանաշ-  
ուրութեան թշնամիներին: Այսպէս կապում է մ-  
ուաշնորդւի հայ կօօպերատորը հրամանդիմունքը, որ  
կարելի լինի կօօպերացիան հայ գիւղում դարձնել  
աշխատաւորական կեանքի գործն ոյժերից մէկը:

Կօօպերացիան ազգային չէ, նա տնտեսական  
կազմակերպութիւն է:

003  
004  
1

Հայ կօօպերատորը իր աշխատանքի համար  
միջավայր ընտրելով հայ գիւղը և նպատակ  
խեղճ ու կրակ աշխատաւոր զանգւածերի՝ բան-  
ուրութեան և գիւղացիութեան տնտեսական վի-  
ճակի բարելաւումը, եթէք, ոչ մի գէպքում կօօ-  
պերատիւի վրայ չպէտք է նայի, որպէս մի ազ-  
գային հաստատութեան: Կօօպերացիան տնտե-  
սական կազմակերպութիւն է. իբրև այդպիսին  
հեռու որ և է ազգային գունաւորումից: Ուստի  
հայ կօօպերատորը նախաձեռնելով այս կամ  
այն գիւղում սպառողական կօօպերատիւի կազ-  
մակերպման, նրա հետ համահաւասար կեր-  
պով պիտի կապի ազգային միւս տարրերին,  
առանց որ և է խարութեան:

Կօօպերատիւ զրոյցներ եւ Ռոչդելեան սկզբունքները:

Ղեկավարւելով առաջադրւած սկզբունքնե-  
ներով, հայ կօօպերատորը նախնական զրոյցնե-

1802

15684-58



ների ժամանակ կարող է օգտվել մոդական լապտերով։ Ապագայում այդ նպատակի համար կարելի է նոյն խոկ յարմարեցնել էլեկտրո-բիո-գրաֆը և մատչելի ու պարզ կերպով ցուցադրել կօպերատիւ ամբողջ շարժումը, պատմութիւնը եւրոպայում, Մուսաստանում, Կովկասում, լուսաբանել կօպերացիայի էութիւնը և օգուտները։

Յատկապէս Ռոչդեկան սկզբունքները, բանւորական, գիւղացիական ժողովներում պէտք է առանձնապէս պարզւին, որովհետեւ այդ սկզբունքներն են կազմում աշխատաւորս կոն կօպերատիւների հիմքը։ Հայ կօպերատորը պէտք է իրեկ ուղեցոյց ունենայ Ռոչդել քաղաքի բանւորների յայտարարած նշանաբանները, որոնք են։

ա) Սպառողական կօպերատիւ ընկերութիւնը իր անդամներին պիտի մատակարարի ԿԱՆՈՆԱ-  
ԿՈՐ ԶԿԵՂԾԱԾ ԱՊՐԱՆՔ։

Ապրանքների ֆալսիֆիկացիան մասնաւորապէս ներկայումս անհաւատավի չափերի են հասնում։ Դեռ 1843 թւին Ռոչդելի ջուլհակները զգում էին, թէ մասնաւանդ ապագայում առևտրի անկուշտ ներկայացուցիչները ինչպիսի խարդախութիւններ են անելու, միայն թէ առևտրին ընթացք տան։ Եւ այդ արդարացաւ, ֆալսիֆիկացիան աստիճա-

նաբար աւելի մեծ չափերի հասաւ, ինկ այս մեծ պատերազմի ընթացքում նա գարձաւ անհրաժեշտութիւն անդամ սպառողի համար, որը կեղծւած ապրանքին աւելի էր համակերպւում, քան մաքուրին։ Կեղծւում է ալիւրը, որ զանագան պարենաւորման յանձնաժողովսերը բսժանում են գաւառի ազգաբնակչութեանը։ Ալիւրի մէջ բացի թեփից, գուք կը տեսնէք այլ տեսակի անարժէք խառնուրդներ ևս։ Կեղծւում է նոյնպէս շաքարը, մանաւանդ շաքար սւազը յաճախ առանց խառնուրդի շուկայ չի հանւում։ Նոյն ձեռվ քաղաքացին այժմ քիչ ու շատ մաքուր իւղի, կարագի, կաթի երես այլ ևս չի տեսնում։ Ինչ ասես, որ այս նիւթերի մէջ չեն խառնում և դժբախտ սպառողը անոյժ հանդիսատեսի գերում ստիպւած է համակերպւել։ Կեղծւում են նոյնպէս գործարանային ապրանքները։ Գիւղացիութեան հետ գործ ունեցող մանրավաճառներ էժան գներով ձեռք են բերում այն ապրանքները, որոնք զբաւիչ են արտաքուստ, բայց խայտառակ ներքուստ։ Գիւղացու առած ճոթը, մանուֆակտուրային զանազան ապրանքները շատ քիչ են գործ ածում և մի քանի ամսից յետոյ բոլորովին մաշւում են, անպէտքանում։ Մեր գիւղացուն

և բանտօրին նոյն ձևով մանրավաճառները ծախսում են թէյը անպէտքացած, փչացած։ Այդ թէյը Ռուսաստանի թէյատներից վարպետօրէն հաւաքւած, արդէն մի անգամ գործածւած թէյն է, որին կրկին գոյն, մի քիչ անուշահոտութիւն են տալիս և ապա խաւար մասսաների մէջ առատութեամբ, որպէս ընտիր ապրանք, վաճառում։ Մեզանում մանաւանդ գիւղացիութիւնը մթերքների կեղծարարներից ուղղակի շահատակւում է։ Եւ այս գէպքում միակ գործնական կազմակերպութիւնը, որ կարող է իր սպառողներին մատակարարել իսկապէս չկեղծւած ապրանքներ և կուել ֆալսիֆիկատորների դէմ, այդ սպառողական կօօպերացիան է։

Կօօպերացիան հնարաւորութեան սահմաններում, արտադրական ասպարէզում աստիճանաբար իր ցանցերը տարածելով, կարող է կեղծիքներին վերջ դնել։

բ) Սպառողական ընկերութիւնը ապրանքները պիտի վաճառի ԿԱՆԽԻԿ

Սա շատ կարենու է սպառողական խանութների համար, մանաւանդ այն ընկերութիւնների, որոնք տակաւին նոր են և որ սնց շըջանառութիւնը մեծ չէ։ Մինչև 3000 ո. շըջանառութիւն ունեցող խանութների համար չի կարելի խօսել

ապառիկ առևտրի մասին, իսկ աւելի մեծ խանութներն էլ ապառիկ առևտուր կարող են մըտցնել միայն այն դէպքում, եթէ իրենց կից ունին վարկային ընկերութիւն, որը հարկաւոր վարկ կըտայ ապառիկ առևտուր անողներին։ Այդ վարկի սահմաններում էլ կարող է խօսք լինել ապառիկի մասին։ Ընդհանրապէս ապառիկ առևտուրը այն վատ հետևանքներն է ունենում, որ կատարեալ անորոշութիւն է մտցնում խանութի գործունէութեան մէջ և շատ հեշտութեամբ նրա վակման պատճառ է դառնում։ Եւրոպայում և Ռուսաստանում շատ ու շատ խանութներ փակւել են, որովհետեւ ընդունել են ապառիկ առևտուրը։

Սպառողական ընկերութիւնը որպէս զի յարատե և մնայուն լինի, պէտք է նախ և առաջ հետու կանգնի այնպիսի ձեռնարկներից, որոնք տատանում, անկայուն դրութիւն են ստեղծում կօօպերատիւի մէջ։ Այդպիսի անկայուն դրութիւն առաջ բերող պատճառներից մէկն էլ ապառիկ առևտուրն է, որից ուրեմն պիտի խուսափեն կօօպերատիւները։

դ) Ապրանքները պէտք է վաճառին ԶԱՓԱՀՈՐ շուկայի զներով։

Պոչդելի կօօպերատոր պիտօններները այսպէս են ընդունել, որովհետեւ նորմալ անտեսական

պայմաններում, երբ միջնորդների տարիներին ևս  
մեծ տոկոսները չեր աշխատում, էժան վաճառքը  
կարող էր ընկերութեանը հարւածել և վնասնե-  
րի պատճառ դառնալ: Սակայն անբնական տնտե-  
սական յարաբերութիւնների ժամանակ, երբ  
առևտրականները օգտակար հազորդակցութեան  
միջոցների անկանոնութիւնից, իրենց մօտ թա-  
քստոցներում ունեցած ապրանքների գները ար-  
հետականօրէն բարձրացնում են և հարիւրաւոր  
տոկոսներ աշխատում, ապա խնդիրը բոլորովին  
փոխուում է: Այս գէպքում է ահա, որ կօօպերա-  
ցիան իր համեստ ոյժերով անգամ հրապարակ է  
գալիս և ազդում շուկայի գների վրայ, իջեցնում  
գէթ որոշ չափով անհրաժեշտ միջերքների գնե-  
րը: Այս երեսյթը աւելի ևս նկատուում է գաւա-  
ռական կեանքում, երբ այս կամ այն անկիւնում  
եղած կօօպերատիւը էժան և լաւ հաց ծախելով,  
ստիպում է տեղական հայթուխներին իրենց  
ախորժակները մի քիչ զապել:

Ուրեմն, նշանակում է տնտեսական վայրի-  
վերումների ժամանակ, կօօպերատիւնները այլ ևս  
շուկայի չափաւոր գներով անգամ չեն առաջ-  
նորդւելու, որովհետեւ այդ գները մեծ մասամբ  
արհետականօրէն են ստեղծւում: Բնդիակառակը,  
պէտք է այդ գների դէմ ամեն կերպ կուել և

ապրանքները ըստ կարելոյն էժան ծախել, "բ-  
պէսզի սպառողի վիճակը մի քիչ թեթեանայ:  
η) Սպառողական ընկերութեան բոլոր գործերում  
իրաքանչիւր անդամ միայն ՄԻ ԶԱՅՆԻ  
ԻՐԱՀՈՒԽՆՔ ՈՒՆԻ:

Դեմոկրատիայի հիմնական տեսակէտներից  
մէկն էլ այն է, որ ընդհանրապէս բոլոր հիմնար-  
կութիւններում, հասարակական բոլոր կարգի  
կազմակերպութիւնների մէջ իրաքանչիւրը մի  
ձայն ունի, քաղաքացինները հաւասար են և ար-  
տօնեանների ու սովորական մահկանացունների  
խնդիր չի կարող լինել: Այսպէս է և աշխատառ-  
րական կօօպերատիւի մէջ, որի հիմքը անդամ-  
ների իրաւական հաւասարութիւնն է: Եթէ այդ  
հաւասարութիւնը չլինի, այն ժամանակ կօօպե-  
րատիւը կըդառնայ բուրժուական այն կազմակեր-  
պութիւններիցից մէկը, որոնք ծառայում են տի-  
րող, շահագործող զասերի տնտեսական շահերին:  
ե) ՓԱՅԵՐԻ ԱՐԺԵՔԸ ԲԱՐՁՐ ԶՊԻՏԻ ԼԻՆԻ,  
որպէսզի աշխատատրութիւնը անմիջական մաս-  
նակցութիւն ունենայ կօօպերատիւններին:

Եւրոպական կօօպերացիան այս ինդում  
մեզ շատ օրինակներ է տալիս: Բելգիական, անգ-  
լիական, շլեյշարական կօօպտերատիւնները մօտ

լինելով աշխատաւորութեանը և յաճախ ունենալով զուտ դասակարգային բնոյթ, միշտ էլ գործ սկսելիս, կօպերատիւ ձեռարկութիւններ կատարելիս, յափշտակել են ոչ այնքան ապրանքային մեծ շրջանառութեան հնաւորութեամբ և մեծ օգուտներով, որքան խեղճ ու կրակ, զուրկ աշխատաւորութեան մասնակցութեան խնդրով՝ Բանւորական կօպերատիւներում փայերը փոքր են, երբեմն նրանք մինչև 50 կոպէկի են հասնում: Եւ եթե աւելի էլ բարձր փայեր են լինում, ապա այդ դէպքում յարմարութիւն է արւում փայերը վճարել մաս մաս և նոյն իսկ տարւայ վերջում ստացած օգուտից որոշ զումարներ են յատկացւում չքաւոր բանւորներին, կամ գիւղացիներին փայեր են բաժանւում, անդամ լինելու համար: Ուստաստանում ես բանւորական, գիւղացիական կօպերատիւները մասնաւում եւրոպական պատերազմից առաջ փայերի արժէքը 3—5—10 ռ. սահմաններում էին նշանակում: Միայն մեծ պատերազմը ստիպեց կեանքի թանգութեան հանդէպ ընկերութիւնների շրջանառուղ դրամագլուխները բարձրացնել և 10 ռ. իբրև նորմա ի նկատի ունենալ: Հայ գիւղերուս կարելի է 5-10 ռ. փայը սովորական դարձնել, սարային չքաւոր գիւղերում 5 ըուբլին

ընդու սել, իսկ դաշտի աւելի հողատէր ունեսոր գիւղերում 10 ըուբլի:

զ) Փայերի քանակը իւրաքանչիւր անդամի համար սվածի սահմանափակվ

Սպառողական կօպերատիւները ակցիոներական ընկերութիւններ չեն: Գիւղի տղրուկները երբեմն կօպերատիւների մէջ թիւրիմացութեամբ մուտք գործելուց յետոյ, կարծում են, որ կօպերատիւը զուտ առևտրական օգտի սկզբունքը հետապնդող ընկերութիւն է, ուրեմն և փայերի անւան տակ կարելի է մտցնել հազարներ և լաւ աշխատել: Որա դէմ է, որ հայ կօպերատորը կտրուկ միջոցներով կուելու է, փայերի թիւը ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանափակելու, որ կօպերատիւը աշխատաւորական բնոյթ ունենայ և նրանից հեռանան յետին, վատթար նպատակներով մօտեցող վտանգաւոր տարրերը: Կօպերատիւնների մէջ փայերը սահմանափակ թւով պիտի լինին իւրաքանչիւր անդամի համար, որպէսզի կօպերատիւի գործերը այս կամ այն անդամից կախում չունենայ, այլ հիմնւած լինի կոլեկտիվի միջոցների վրայ:

է) Տարւայ վերջը ՕԳՈՒԾԸ պէտք է ԲԱԺԱՆԵԼ ոչթէ փայերի, այլ անդամների առած ապրանքների համեմատ:

Շատ ու շատ ապադասակարգային չինով-նիքական կօօպերատիւների մէջ տարւայ վերջը ստացած օգուտը, որը իսկապէս օգուտ է չպէտք է համարել այլ յաւելում, բաժանւում է փայտէրերի մէջ։ Ուրեմն նշանակում է ընկերութեան այն անդամը, որը զուցէ թէ ամբողջ տարւայ ընթացքում ընկերութեան խանութից առևտուր չի արել, իրաւունք ունի օգուտ ստանալ։ Ըուսական նախկին նորմականոն սգըռութիւնն ևս ընդունում էր  $10^0/_{\circ}$ -ը փայտէրերի մէջ բաժանել։ Դեմոկրատիկ կօօպերատիւը փայերը երբէք հիմք չափակ վերցնի զուտ օգուտի բաշխման համար, այլ միայն պիտի բաժանի համաձայն առաջ ապրանք-ների, որպէսզի ամեն մարդ որչափ որ օգուտ է տւել ընկերութեանը, այնքան էլ ստանայ իսկապէս։ Զէ որ օգուտը իսկապէս յաւելումն կազմող դումարն է, որ կամաց-կամաց ստացել է ապրանք առնողների յաւելեալ վճարումներից։ Արդարութիւնը պահանջում է, որ աւելացած գումարը տրւի տէրերին, որպէսզի օգուտը իսպառ վերանայ։ Եթէ կապիտալիստական տնտեսութեան մէջ գործարանատէրը ապրում է աշխատաւորի յաւելեալ արժէքով, ապա կօօպերատիւ մէջ, որպէս կապիտալիզմը ժըխ-առող մի կոլեկտիւ կազմակերպութիւն, պէտք

չկայ յաւելեալ արժէքի և այդ արժէքը վերադարձում է տէրերին։ Աշխատաւորութեան շահերի նախանձախնդիր կօօպերատիւը այսպէս պիտի առաջնորդւի, որ նրանում ինչ որ ախոր-ժակներ չգրգուեն և բոլոր գործին նայեն որպէս համայնական կազմակերպութեան վըայ։

Զրոյցների ժամանակ կօօպերատորի պատ-մութիւնը անելիս և կօօպերացիայի կեանքի խո-շոր երկոյթները նկարագրելիս, կօօպերատորը կարող է օգուտել ուսւ գրականութեան մէջ այդ մասին լոյս տեսած բոլոր ուսումնամիջու-թիւններից, որոնց ցուցակը կարելի է գտնել սոյն գըքի վերջում։

Սպառողական ոնկերութիւնը բացում է առանց թոյլատութեան։

Այսպիսի զրոյցների, մտքերի փոխանակու-թիւնից յետոյ միայն, երբ կօօպերատոր հրա-հանգիչը բաւական չափով կը ծանօթանայ տեղա-կան պայմանների, գիւղացիութեան մէջ աչքի ընկնող թէկուզ անպատճառ, բայց մաքուր, ազնիւ և ընդունակ ոյժերի հետ, կը դիմի կազմա-կերպութեան գործին, հիմնադիր ընդհանուր ժողովի գումարման, քանի որ այսուհետեւ ոպա-ռողական ընկերութիւններ հիմնելու համար պէտք չկայ հին, յատուկ թոյլատութեան եղա-

նակով առաջնորդւել, այլ միայն այսպէս կոչւած «ЯВОЧНЫМЪ ПОРЯДКОМЪ». Կօօպերատիւը հասարակական կազմակերպութիւն է, նրա հիմնադրութեան անդամ լինել ցանկացողներին է վերաբերում և ոչ մի սանկցիայի կարիք չկայ: Միայն պէտք կայ ոեգիստրացիայի և կօօպերատիւնոր կանոնադրութեամբ այդ ոեգիստրացիան պիտի կատարեն շրջանային դատարաններին կից գործող յատուկ ատեանները, որոնց և պէտք է յայտնել հիմնւած կօօպերատիւի մասին գործը ուրեմն շատ հեշտացել է, առաջւայ ձգձգումները այլ ևս բոլորովին չկան. կօօպերատորը կարող է ամեն ինչ անել և միայն յայտնել ուր հարկն է:

Հրահանգիչը ղեկավար չէ, այլ լուսաբանող է:

Սպառողական ընկերութիւններ հիմելիս, ինչպէս ասացինք, չպէտք է շտապել, այլ պէտք է առաջ բերել այնպիսի կօօպերատիւններ, որոնք լինին մնայուն և ուժեղ: Անհրաժեշտ է, որ կօօպերատոր հրահանգիչը հենց առաջին ժողովից ընդարձակ չափով հնարաւորութիւն տայ գիւղացուն հրապարակ հանել իր ստեղծագործական թափն ու բոլոր ընդունակութիւնները: Հրահանգիչը երբէք չպիտի ձգտի ղեկավար, առաջնորդ լինելու, նա միայն պիտի աշխատի լուսա-

բանողի, խորհրդատուի ղերում լինել: Վարագոյրի յետևում կանգնած կօօպերատոր հրահանգիչը բոլոր ընդհանուր ժողովներում ամեն չանք պիտի թափի, որ գիւղացիութեան համը լեզուն բացւի, որ աշխատաւորութիւնը շունչ առնի և զգայ ու գիւտակցի կօօպերացիայի արժէքը:

Ինչ ինդիբներով է զրադելու ընդհանուր ժողովը:

Ընդհանուր ժողովում կօօպերատոր հրահանգիչը պիտի հետեւ բոլոր խնդիրներին իր պարզաբանող և յատկապէս ուշադրութիւն դարձնի, որ ժողովը նախահաշիւը բազմակողմանի քննութեան առարկայ դարձնի, որովհետեւ այս գէպքում գիւղացիք գործնական փորձառութիւն կարող են հրապարակ հանել: Ժողովը իր համար մօտաւորապէս պիտի պարզի, թէ ընկերութիւնը տարւայ ընթացքում որքան եկամուռներ է ունենալու փայերից և մուտքի վեճուրից: Պէտք է լուսաբանել, թէ ինչ սպասելիքներ կան, որ ըստ այնմ կարելի լինի որոշել, թէ հնարաւոր է արդեօք գործ սկսել և եթէ հնարաւոր է, ապա ինչ սահմաններում: Աշխատաւորութիւնը գիւտակցելու է, որ կօօպերատիւի յաջողութիւնը հիմնաւորւում է բացառապէս ինքնագործունէութեան վրայ: Փոխառութիւնը միայն նպաստող գործօն է հանդիսանալու և այն էլ միայն այն գէպքում, երբ արդէն գործը

կանոնաւորւել է։ Ինչ վերսբերում է ծախսերին, ապա նախահաշիւը կազմելիս պէտք է ի նկատի ունենալ բնակարանի, ծառայողների, լուսաւորութեան, վառելափայտի, հաշւապահութեան, ապահովագրութեան ծախսերը և այդ սահմաններում կազմել նախահաշիւը։ Անհրաժեշտ է նախահաշւի հետ այնպէս որոշել, թէ ընկերութիւնը ինչ տեսակի ապրանքներ է ծախսու։ Մեր կօօպերատիւնները նկայումս աւելի հեշտութեամբ նահանգական և գաւառական պարենաւորման յանձնաժողովներից ստա՞ւ են շաքար, ալիւր, նաւթ։ Սակայն ի հարկէ այս քիչ և կօօպերատիւնները պիտի աշխատեն ունենալ նոյնպէս միւս տեսակի անհրաժեշտ ապրանքները և ձգտեն իրենց գործունէութեանը տալ հիմնաւոր բնոյթ։ Կօօպերատոր հրահանգիչը ընդհանուր ժողովում պիտի կարևոր բացատրութիւններ տայ նոյնպէս այն պարտականութիւնների և իրաւունքների մասին, որ ունի վարչութիւնը և քննիչ յանձնաժողովը։ Ընտրութիւնների ժամանակ անհրաժեշտ է կանգ առնել աշխատանքի բաժանման վրայ, որպէսզի վարչութեան իւրաքանչիւր անդամ իր ընդունակութիւնների համեմատ օգտակար լինի ընկերութեանը։ Սշխատանքի բաժանման էութիւնը կայանում է նրանում, որ առեարական մասի

կառավարիչը պիտի լինի առանձին, գանձապահը առանձին։ Յատկապէս գործի առեարական կողմը լաւ հիմքի վրայ է գըւելու։ Ի հարկէ, քանի որ կօօպերատիւնները հիմնւում են ազատ կերպով, որեմն կարելի է ընդհանուր ժողովում նախանդարները, յատուկ անդորրագրերով անդամակիցարները հաւաքել և ընդհանրապէս ընտրութիւններին մասնակցողներին պարտաւորեցնել ստորագրել անդամակցական ցուցակում։ Կօօպերատոր հրահանգիչը ընտրովմիններից յետոյ։

Ընտրութիւններից յետոյ կօօպերատոր հրահանգիչը մասնակցելու է վարչութեան նիստերին անհրաժեշտ խորհուրդներ տալու գործի կազմակերպման, գրքերի, փաստաթղթերի և գործակատարի հետ կապւելիք պայմանագրի մասին։ Ընկերութիւնը պիտի ունենայ նմանապէս իր կնիքը։ Վարչութեան ժողովները պիտի լինին կանոնաւորապէս, գոնէ շաբաթը մի անգամ։ Ընդհանուր ժողովը տարւայ մէջ յաճախ պիտի գումարւի, որպէսզի կօօպերատիւի և հասարակութեան մէջ կապ պահպանւի։

Հաշվապահովմինը սպառողական ընկերութիւններում

Էական նշանակութիւն ունի թէ գոյութիւն ունեցող և թէ նոր կազմակերպւող կօօպերա-

տիւների համար յատկապէս հաշւապահական գործի կանոնաւորումը։ Մեր ընկերութիւնները ամենից աւելի տառապում են հաշւապահական խնդրում։ Բազմաթիւ կօպերատիւններում հաշիւ ասածդ նոյն իսկ բոլորովին գոյութիւն չունի, հաշիւները պահուու են բերանացի կերպով։ Պարզ է, որ այսպիսի կօպերատիւնները որքան էլ յսջողութիւն ունենան, այնուամենայնիւ չեն կարողանայ երկար դիմանալ և վերջի վերջոյ փակւելու են։ Նոր կազմակերպուած ընկերութիւնները ունենալուեն հաշւապահական գրքեր՝ գլխաւոր գիրքը, դրամարկղի գիրքը, ապրանքային գիրքը, փայտէրերի հետ ունեցած հաշիւների գիրքը, զանազան հաշիւների գիրքը։ Ընկերութիւնները պէտք է ունենան նոյնպէս յատուկ բլանկներ ապրանքների մնացորդը ցուցակագրելու, ամսական և տարեկան հաշւեկշնոր կազմելու համար։ Անդամներն էլ իրենց հերթին ստանալու են յատուկ անդամակցական գրքեր։ Այս բոլորից դուրս հաշիւնները այն ժամանակ արժէք կունենան, երբ նրանց համապատասխանում են ապրանքային փաստաթղթերը, ստացագրերը, մուտքի և ելքի օրդերները։ Հաշւապահական գրքերը պիտի տարւին ամերիկական սիստեմով, կանոնաւոր, մաքուր, իսկ փաստաթղթերը պի-

տի պահւին յատուկ մատեաններում, որոշ կանոնաւորութեամբ։ Այն դէպքում միայն տարւայ վերջը պարզ կըլինի ընկերութեան ընդհանուր շրջանառութիւնը, ունեցած ծախսերը, ընդհանուր և զուտ օգուտը, այսինքն ընկերութեան իսկական պատկերը։ Հաշւապահութեան նկատմամբ ուուս գլականութիւնը բաւական հրատարակութիւններ ունի, որոնց մէջ ամենից կանոնաւորը Ե. Н. Егоровъ-ի „Полное счетоводство для сельскихъ и друг. небольшихъ обществъ потребителей“ գիրքն է, որ և խորհուրդ կըտայինք մեր կօպերատոր հրահանգիչներին ունենալ իրեւ ձեռնարկ։

Հաշւապահական գործի կանոնաւորման համար չափազանց էական նշանակութիւն ունեն այսպէս կոչւած հաշւապահական գասընթացքները զանազան շրջաններում։ Այս գասընթացքները ունենալու են համեստ ծրագիրներ, շաբաթից աւելի չպէտք է տեսն, որպէսզի պարապմունքներին մասնակցել կարողանան հարեւան գիւղերի կօպերատիւնների հաշւապահները, վարչութեան, քննիչ յանձնաժողովի անդամները։ Դասընթացքներին ներկայ եղողները կարող կըլինեն հարց ու պատասխանի միջոցով պարզել գործնականում առաջացած բոլոր մութ ու անոռու կէտերը և սիստեմատիկ կերպով ծանօթա-

նալ գործնական հաշվապահութեան հետ։ Կօօպերատոր հրահանգիչը մի շրջանում իր պարապամունքները վերջացնելուց յետոյ, պիտի անցնի միւս շրջանը և այստեղ ևս նոյն աշխատանքը կատարի։ Այսպիսի դասընթացքների կազմակերպման համար սպառողական ընկերութիւնների Մոսկվայի ընդհանուր միութեան հրահանգիչները արդէն մշակել են պարապմունքների համապատասխան ծրագիր, որից և մեր կօօպերատորները կարող են օգտել։

Կօօպերատիւների գործերի քննութիւնը։

Հրահանգիչների պարտականութիւնների մէջ է մտնում նոյնպէս քննութիւնների խնդիրը։ Հրահանգիչը շրջելիս պիտի անպայման ծանօթանայ իւրաքանչիւր սպառողական ընկերութեան բոլոր կողմերի հետ և առաջացած գեղծումներն ու թիւրիմացութիւնը տեղական գիտակոյժերի հետ միասին հենց հիմքից արմատախիլ անի։ Այլապէս շատ ու շատ կօօպերատիւներ անբարեխիղ պաշտօնէութեան անփութութեան պատճառով կըտուժեն։

Այս տեսակէտից պէտք է ասել, որ աւելի լաւ վիճակի մէջ են այն հրահանգիչները, որոնք ներկայացուցիչ են այս կամ այն կենտրոնական սպառողական ընդհանուր միութեան, կամ սպա-

ռողական ընկերութիւններին վարկ տւող մեծ կենտրոնական վարկային հաստատութեան և իրաւունք ունեն պաշտօնապէս քննութիւնների ենթակելու անդամ կօօպերատիւններին։

Մի քիչ աւելի իրաւագուրկ վիճակումն են կօօպերատիւ բիւրօնների և գիւղատնտեսական ընկերութիւնների հետ գործող յատուկ կօօպերատիւ սեկցիաներից նշանակւած հրահանգիչները, որոնք պաշտօնական քննութիւններ կատարելու իրաւունք չունեն։ Սակայն այս հանգամանքը կարող է արգելք չկնել, եթէ հրահանգիչը իր շրջանում հեղինակութիւն ունենայ և գիւղացիութեան ազնիւ, հարազատ բարեկամը համարւի։ Այս զէպքում պատահմամբ սպառողական ընկերութիւնների մէջ մուտ գործած անվատահելի տարրերը երբէք չեն կարողանայ խուսափել կօօպերատոր հրահանգիչների և գիտակից աշխատաւորութեան գնահատութիւնից։ Միտեմատիկ քննութիւնների համար պահանջում է, որ սպառողական ընկերութիւններն ունենան յատուկ մատեսններ, որտեղ հրահանգիչի իւրաքանչիւր դիտողութիւնը արձանագրւի և ստորագրվի վարչութեան անդամների կողմից։ Այսպիսի մատեսնները պէտք է քննւեն ընկերութեան ընդհանուր ժողովում, որպէսզի գիտակցաբար կարելի լինի թերութիւնները վերացնել։

Ահա, թէ ինչ եղանակով կարելի է գոյութիւն ունեցող կօպերատիւ ընկերութիւնները կանոնաւորել:

Կողովորական եւ սոցիալական հեռանկարը :

Ընկերութիւնները կանոնաւորելիս կօպերատոր հրահանգիչը իր նպատակներին հասած կը լինի այն դէպուտ, երբ կօպերատիւում դեմոկրատիկ, աշխատաւորական ոգին տիրապետող կը լինի: Այս տեսակէտից այդ հիմնական նպատակին նպաստող պարագաներից մէկը զուտ օգուտի, դիւրիդենտի բաշխման խնդիրն է: Իր ժամանակին, Ռոշդէլեան սկզբունքների մասին խօսելիս, մենք գանկ առանք դիւրիդենտի բաշխման վրայ: Սակայն ի նկատի ունենալով այդ խնդրի անշափ կարևորութիւնը կօպերատոր հրահանգչի համար, աւելորդ չէ մանրամասնորէն և առանձնապէս յատուկ գլխում խօսել այն հեռանկարի, այն սպասելիքների մասին, որ ստեղծում է զուտ օգուտի բաշխումը և որտեղ հրապարակ է գալիս աշխատաւորութեան գիտակից վերաբերմունքը, մեր կհանքի երևոյթերի և փոխյարաբերութիւնների լայն ըմբռնողութիւնը:

Հարցը նրանումն է, որ աշխատաւորական կօպերատիւ մոլեռանդ հակառակորդները՝ պահպանուականներն ու բուրժուական մանչեստե-

րիզմի իդէօլոգները շարունակ ճգնում են աշխատաւորական կօպերատիւնների արժէքը նսեմացնել, նրան ոգին մեոցնել և կօպերատիւր համեմատել ակցիօններական ընկերութիւնների հետ, նեղ շրջանակների մէջ տեղաւորել: Այսպէս էին՝ նայում կօպերատիւնների վրայ նոյնապէս սուսական հին, բիւրոկրատիական ոէժիմի երդւեալ պաշտպանները, որոնք սարսափած կօպերատիւնների ունեցած անօրինակ յաջողութիւններից, փորձում էին արհեստական միջոցներով նրանց ընթացքը թուլացնել: Անհերքելի և բոլորի համար էլ պարզ է, որ աշխատաւորական կօպերատիւնները ոչ միայն տնտեսական, այլ և հոգեկան, կուլտուրական, սոցիալական նպատակների են հետապնդում: Աշխատաւորական կօպերացիան ժխտում է օգտի շահագործման սկզբունքը. նա որպէս աշխատաւորական կազմակերպութիւն՝ հակագրւում է ժամանակակից բուրժուական կարգերին, որտեղ տնտեսական անաջող մրցումն է տիրապետում: Աշխատաւորական կօպերացիան իր խաղաղ սլացքի ժամանակ քանդում է հնարաւոր չափով բուրժուական անարդար կարգերի հիմքը և իր ընդարձակ բազմակողմանի գործունէութեամբ նպաստում, աշխատաւորութեան գասակարգային զիտակցութեան գարթման: Նա գեմոկրատիական

միւս կազմակերպութիւնների, աշխատաւորական այլ կարգի միութիւնների հետ մեծ դեր ունի կատարելու և այդ պատմական դերն է, որ պիտի գիտակցի իւրաքանչիւր կօօպերատոր, որ ուզում է ծառայած լինել աշխատաւորութեան։ Կօօպերատորը պէտք է լինի ֆանատիկոս։ Այս տեսակէտը եւսկէտ ունենալով հայ կօօպերատոր հրահանգիչը իբրև պարզաբանող, իր գործունէութեանը այնպիսի բնաւորութիւն է տալու, որ կօօպերացիան դառնայ լոյն հասորակական գաղափարական կազմակերպութիւն իր խռութ միջավայրում։

Կօօպերատիւնները իրենց գուտ օգուտից պիտի յատկացումներ անեն կուլտուրական նպատակների համար, հիմնեն ակումբներ, գրագարան, ընթերցարաններ, մանկական պարտէզներ, մսուրներ, գիւղացիութեան համար վարձակէտեր, փորձնական դաշտեր, թերթեր, պարերականներ հրատարակեն, դասախոսութիւններ, ներկայացումներ, զքոսանքներ՝ զանազան հանդէսներ, գիւղացիութեան և բանւորութեան համար յատուկ ընթերցումներ կազմակերպեն, նպաստեն ժողովրդական համալսարաններին, դպրոցներին և ընդհանրապէս կուլտուրական ձեռնարկներին։ Այս ուղղութեամբ եւրոպական և ոռոսական կօօպերացիան արդէն ա-

հագին գործ է կատարել, որի գեղեցիկ նկարագիրը շատ ու շատ կօօպերատիւ ձեռնարկների մէջ կարելի է տեսնել։ Մեր կօօպերատիւններն ևս թէպէտ քիչ են, թէպէտ անգիտակից վիճակում, այնուամենայնիւ միշտ էլ տարւայ վերջում գուտ օգուտից յատկացումներ կուլտուրական նպատակներով անում են։ Առաջիկայում ի հարկէ, երբ հայկական շրջաններում գործող կօօպերատիւններն կը կանոնաւորւեն, կը կազմակերպւեն, այն գէպքում այս կարգի աշխատանքներին նըանք առանձնապէս թափ կը ներշնչեն։ Կօօպերատիւնները մեծ դեր են կատարում նոյնպէս բնակարանային խնդրում։

Մեր կօօպերատիւնների համար օրինակ պիտի զառնայ այն բեղմնաւոր գործունէութիւնը, որ կատարել են կօօպերատիւնները այս անչափ կենսական հարցում, անդամ ամբողջ բաղաքներ են հիմնել, ինչպէս օրինակ հտալիայում «Միլանինօ», Անգլիայում «Լեչևրս», Բորնսուիլ քաղաքները։ Կօօպերատիւնները արդէն հիմնել են նոյնպէս միշտական հիմներ հիւանդ բանւորների համար Անգլիայում, Բելգիայում, Ֆրանսիայում, Շվեյցարիայում, որոնց մէջ յայտնի է «Թողէն» անատորիան Անգլիայում։

Կօօպերատիւնները ընդ առաջ գնալով աշխատաւորութեան կարիքներին, կազմակերպում են

նոյնպէս դրամարկղներ կօօպերատիւների հիւանդ անդամներին բժշկական օգնութիւն ցոյց տալու, իսկ հասակաւոր անդամներին, աշխատաւոր ձեռքերից զրկւած ընտանիքներին ապահովելու համար:

Նրանք կասխաթալիստական պայմաններում, հնարաւոր չափով, լուծում են նոյնպէս բանւորական խնդիրը, բանւորութեան կազմած կօօպերատիւների հետ՝ 8 ժամեայ բանւորական օրն իրագործում, դասակարգային անտագոնիզմը կօօպերատիւներում վերացնում և արդար վարձատրութեան սկզբունքն ընդունում:

Այս բոլոր սքանչելի ձեռնարկները միայն ցոյց են տալիս, թէ ինչ ապագայ է սպասում հայ աշխատաւորութեան, եթէ նա միայն կազմակերպւի կօօպերատիւների մէջ, եռանդ և անդուլ աշխատանք ցուցադրի:

### Ստատիստիկական աշխատանքներ:

Սպասողական կօօպերատիւների համար կարեոր են նոյնպէս ստատիստիկական աշխատանքները: Հայ կօօպերատոր հրահանգիչը որպէսզի իր գործունէութիւնը որոշ սիստեմով տանի, պէտք է շատ մեծ տեղ տայ ստատիստիկային: Մանաւանդ մեզանում ստատիստիկան

էական նշանակութիւն ունի, որովհետև յաճախ մենք կօօպերատիւ կեանքում առաջացած երեւոյթներն ու դէպքերը չենք կարողանում իսկութեամբ ըմբռնել և վերլուծել: Մինչդեռ ստատիստիկան մեզ կըպարզի իւրաքանչիւր շրջանի իսկական պատկերը և բոլոր այն պակասաւոր կողմերը, որոնց վերացումով միայն կարող է պայմանաւորւել կօօպերացիայի առողջ զարգացումը: Հայ կօօպերատոր հրահանգիչը ստատիստիկայի օժանդակութեամբ լուսաբանելու է, թէ իր շրջանում գործող սպասողական կօօպերատիւներից իւրաքանչիւրը 1) քանի անդամ ունի, 2) այդ անդամները ի՞նչ խաւերից են կազմւած, 3) կօօպերատիւի վարչութիւնը ի՞նչ կազմ ունի, 4) ընկերութիւնները որքան փայեր ունեն, 5) իւրաքանչիւր անդամ մաքսիմում քանի փայունի, 6) պահեստի կապիտալը ի՞նչ գումարի է համար, 7) մուտքի վճարը ի՞նչ սահմաններում է լինում, 8) որքան է ընկերութիւնների շրջանառութիւնը, 9) ընկերութիւնները ի՞նչ կարգի ծախսեր են ունենում, 10) դիւփենսի բաշխման ինդիքը, 11) ծառայողների քանակը կօօպերատիւններում, 12) ծառայողների կապը կօօպերատիւնների հետ և նրանց վարձատրութիւնը, 13) ընկերութիւնները որչափ փոխառութիւններ են անում, 14) ի՞նչ կարգի ապրանքներ են ծա-

խում և ուրիշ բազմաթիւ հարցեր, որոնք կըլուսաբանեն կօօպերատիւ կեանքը ամբողջութեամբ։ Ստատիստիկան կօօպերատոր հրահանգչի համար և այն արժէքն ունի, որ հնարաւորութիւն կըտայնրան շարունակ որոշ աշխատանքից յետոյ իր նոր գործունէութեան ծրագիրը մանրամասնօրէն կազմել։ Եթէ հրահանգիչը ներկայացուցիչէ այս կամ այն կազմակերպութեան, կօօպերատիւ բիւրօի կամ սեկցիայի, կարող է պարբերաբար այդ մարմիններին ներկայացնել համապատասխան ծրագիր իր ապագայ գործունէութեան և ապաձեռնարկել իր աշխատանքներին։

Կօօպերատիւ միութիւններ։

Հայ կօօպերատոր հրահանգչի պարտականութիւններից մէկն էլ լինելու է գործող կօօպերատիւնների մէջ ընդհանուր կապ ստեղծելու խնդիրը։ Առանձին առանձին գործող կօօպերատիւնները անզօր են ոյժ ներկայացնելու, կուելու թանգութեան դէմ, պարենաւորման հարցը կանոնաւորելու։ Բայց միութեան դէպքում նրանք տնտեսական և բարոյական մեծ ոյժ են ներկայացնում, որից արդէն պատկառում են տիրող դասերը, զանազան իշխանաւորները։

Միութեան խնդիրն ևս քաղաքակիրթ աշխարհներում վաղուց արդէն իրագործւել է։

Ծուսաստանում ևս սպառողական ընկերութիւնների Մոսկվայի միութիւնը արդէն իր հետ կապել է մօտ 2000-ի չափ կօօպերատիւններ, իր հարուստ հիմնարկութիւններով, ձեռնարկներով և ընդարձակ օժանդակութեամբ արդէն ցուցադրել է այն հսկայական կազ լակերպութիւնը, որի անունը կօօպերատիւ է։

Սպառողական ընկերութիւնների Մոսկվայի միութիւնը 1916 թ. 60 միլիոն բուբու չափ ըրջանառութիւն ունէր, 1500-ից աւելի պաշտոնեաններ, 450,000 ր. փայերի դրամագլուխ։ Այդ միութիւնը այժմ կատարում է առևտրական, կոմիսիօներական գործողութիւններ, ունի գործարաններ, կենարոնական պահեստաեղ, պահում է առևտրական գործակալներ, հրահանգիչներ և այլն։ Այսպիսի միութիւններ արդէն այլն և այլն։ Այսպիսի միութիւններ արդէն գոյութիւն ունեն նոյնպէս Ծուսաստանի միւս ըրջաններում՝ Ֆինլանդիայում, Սիբիրում, հարավային Հինդուստանում և վերջապէս Անդրկովկասում, որը արդէն իր հետ կապել է 240-ի կովկասում, որը արդէն իր հետ կապել է 240-ի չափ սպառողական ընկերութիւններ։ Անդրկովկասեան ընդհանուր միութիւնը մեր գծըախտ միջավայում աշխատաւորական տնտեսութեան բարեխամբան նկատմամբ ահազին դեր ունի կատարելու։ Երեան քաղաքում ևս սպառողական ընկերութիւնների ըրջանային միութեան հիմքն ընկերութիւնների ըրջանային միութեան հիմքն

արդէն զրւել է. որին առանց ազգային խտրութեան մասնակցում են սպառողական կօօպերատիւները: Կարերը կըստիպի, որ կօօպերատիւների քանակի աւելացման հետ, նոյնանման միութիւններ ստեղծւին նոյն իսկ աւելի փոքր շրջանակներում, համաձայն տեղական տնտեսական պայմանների: Կօօպերատոր հրահանգիչը պիտի գիտակցի տեղական կարիքները և արձագանք տայ կեանքի նոր պահանջներին:

Հրահանգչական միութիւններ:

Հայ կօօպերատոր հրահանգիչները որպէսզի իրենց գործունէութեանը լայն և սիստեմատիկ բնոյթ տան, պիտի կազմեն յատուկ հրահանգչական միութիւններ, նոյն իսկ ակումբներ, որտեղ կարողանան նրանք մաքերի փոխանակութիւն ունենալ, զեկուցումներ կարդալ և անհրաժեշտ տեղեկութիւններ ստանալ զանազան շըրջանի կօօպերատիւների մասին: Այսպիսի համախմբումներ, որտեղ կըմասնակցեն գործող բոլոր կօօպերատորները, հայ, վրացի, թուրք և ուուս, առաջ կըրերեն այն խիստ կարևոր մերձեցումը, որին մենք անշափ կարօտ ենք:

Այսպիսով տեսնում ենք, որ կօօպերատոր հրահանգիչը գիւղում լուրջ պարտականութիւն-

ներ ունի: Այնքան շատ են այդ աշխատանքները, որ մի առ մի թւելու հնարաւորութիւն չկայ: Հրահանգչութիւնը կօօպերացիայի ասպարիզում տակաւին դեռ նոր է ձեակերպում և Ռուսաստանում էլ նոր է, որ մասնագիտանում է: Մեր կեանքում էլ կօօպերացիայի զարգացման հետ, հրահանգչութիւնը կըդառնայ մնայուն և աւելի կըմասնագիտանայ:

Իսկ ներկայ օրերում, եթէ այս բոլոր պահանջներին կօօպերատոր հրահանգիչը բաւարարութիւն տայ, այն ժամանակ նա կըդառնայ այնքան զրկանքների ու տառապանքների ենթակայ հայ գիւղի ազնիւ և բեղմնաւոր գործիչներից, որոնցից այսքան զուրկ է մեր գիւղը:

Հայ աշխատաւորութեան գոյութիւնը՝ հայցեղի, հայ կուլտուրայի պահպանութեան խընդիրն է:

Եթէ մինչև այժմ հայ մտաւորականութիւնը տարւած լինելով այլ հոգսերով, հնարաւորութիւն չունէր կովկասահայ գիւղացիութեան հերթական կարիքներին նւիրաբերւելու նոյն թափով և ոգեսրութեամբ, ինչ չափով նա տարւած էր հայութեան ազատազրութեան խնդրով, ապա գոնէ այսուհետեւ այդպէս չպիտի լինի:

Դէպի գիւղ, դէպի հայ աշխատաւորութիւնը.

ահա այն նշանաբանը, որ այսօր պիտի դառնայ  
մեր ժողովրականութեան բոլոր որոնումների  
ելակէտը:

Գիտակցենք այդ և ըստ այնմ գործա-  
դրենք մեր ստեղծագործական ոյժը:



ԿՈՊԵՐԱՏԻՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ  
Հայերէն հրատարակութիւններ

- |   |       |
|---|-------|
| 1) Գիւղատնտեսական շաբաթաթերթ 1916 թ. 3 ր. —                       |       |
| 2) Նիկոլաև Կօօպերացիա . . . . .                                   | 15 կ. |
| 3) Ուղցոյց գիւղացի կօօպերատորին . . . . .                         | 25 կ. |
| 4) Լ. Բերտրան Մատուցի հաւատամքը . . . . .                         | 10 կ. |
| 5) Յ. Լազարեա . Կօօպերատիւ սպառողական ըն-<br>կերութիւնը . . . . . | 20 կ. |

Ուսուերէն հրատարակութիւններ

- |   |       |
|---|-------|
| 1) Устройство Учредительного Собрания<br>(изд. М. С.) . . . . .   | 10 к. |
| 2) Первые шаги правления (изд. М. С.) . . . . .   | 10 к. |
| 3) Наемъ и устройство лавки (изд. М. С.). . . . .   | 10 к. |
| 4) А. Глѣбовъ. Сельскія потребительныя<br>общества . . . . .  | 5 к.  |
| 5) Суздальцевъ. Первые шаги кооператива<br>на пути культ. просв. дѣятельности . . . . .   | 10 к. |
| 6) Н. Гибнеръ. Инструкція для правления,<br>наблюдательного совѣта; ревизіонной комис-<br>сіи завѣдующаго магазиномъ съ приложе-<br>ніемъ устава въ 2-хъ редакціяхъ . . . . . | 35 к. |
| 7) Ушаковъ. О проектѣ общаго коопера-<br>тивнаго закона . . . . .   | 20 к. |
| 8) Ленскій. По кооперативной Европѣ . . . . .   | 50 к. |
| 9) Венеціановъ. Алкоголизмъ и Кооперация . . . . .  | 20 к. |
| 10) А. Мининъ. Война, хозяйство и коопе-<br>рація . . . . .   | 20 к. |
| 11) М. Хенсинъ. 50 лѣтъ потребительной<br>кооперации въ Россіи . . . . .  | 25 к. |
| 12) Туганъ Барановскій. Соціальные основы   |       |

кооперації . . . . .	3 р. 25 к.
13) Николаевъ. Теорія и практика коопера- ціи, часть I. . . . .	1 р. 50 к.
часть II. . . . .	95 к.
14) Анцыферовъ. Очерки по кооперації . . . . .	1 р. 60 к.
15) Шарль Жидъ. Кооперація . . . . .	1 р. 25 к.
16) И. Озеровъ. Что такое общество потребителей и какъ его основать и вести . . . . .	35 к.
17) Слобожанинъ. Смотръ кооперативнымъ силамъ . . . . .	1 р. —
18) Мюллеръ. Настоящее и будущее потребительной кооперації . . . . .	10 л.
19) Мюллеръ. Какъ основать и организовать потребительское общество . . . . .	40 к.
20) В. Зельгеймъ. Кредитъ и потребительская кооперація . . . . .	15 к.
21) Тотоміанцъ. Мощь коопераціі . . . . .	10 к.
22) Тотоміанцъ. Теорія, история и практика потребительской коопераціі . . . . .	2 р. —
23) Е Егоровъ. Полнѣе счетоводство для сельскихъ и др. небольшихъ обществъ потребителей . . . . .	1 р. 75 к.
24) В. Н. Зельгеймъ Указанія по счетоводству потр. обществъ . . . . .	55 к.
25) Кооперативный настольный календарь (изд. М. С.) на 1917 г. . . . .	40 к.
<i>Фирмѣризацийбр</i>	
26) Союзъ потребителей . . . . .	5 р. —
27) Вѣстникъ коопераціі . . . . .	5 р. —
28) Кооперативная жизнь . . . . .	5 р. —
29) Петроградскій кооператоръ . . . . .	4 р. —

**ԴԻՆՆ է 40 Կ.**

Դիմել Բիգլիս, Հայոց Գիւղատնտեհնական Բնկ  
(Արմ. Селькохоз. Общество).